22140507

International Baccalaureate®
Baccalauréat International
Bachillerato Internacional

ARMENIAN A: LITERATURE – STANDARD LEVEL – PAPER 1
ARMÉNIEN A : LITTÉRATURE – NIVEAU MOYEN – ÉPREUVE 1
ARMENIO A: LITERATURA – NIVEL MEDIO – PRUEBA 1

Friday 9 May 2014 (morning)
Vendredi 9 mai 2014 (matin)
Viernes 9 de mayo de 2014 (mañana)

1 hour 30 minutes / 1 heure 30 minutes / 1 hora 30 minutos

INSTRUCTIONS TO CANDIDATES

- Do not open this examination paper until instructed to do so.
- Write a guided literary analysis on one passage only. In your answer you must address both of the guiding questions provided.
- The maximum mark for this examination paper is *[20 marks]*.

INSTRUCTIONS DESTINÉES AUX CANDIDATS

- N'ouvrez pas cette épreuve avant d'y être autorisé(e).
- Rédigez une analyse littéraire dirigée d'un seul des passages. Les deux questions d'orientation fournies doivent être traitées dans votre réponse.
- Le nombre maximum de points pour cette épreuve d'examen est *[20 points]*.

INSTRUCCIONES PARA LOS ALUMNOS

- No abra esta prueba hasta que se lo autoricen.
- Escriba un análisis literario guiado sobre un solo pasaje. Debe abordar las dos preguntas de orientación en su respuesta.
- La puntuación máxima para esta prueba de examen es *[20 puntos]*.

© International Baccalaureate Organization 2014

Հետևյալ հատվածներից ***մեկի*** *մասին գրեք մի գրական մեկնաբանություն: Ձեր պատասխանը պետք է շոշափի ներկայացված երկու հարցումները:*

1.

Իսկ Նունուֆարի թաղումից երկու օր հետո՝ Մարտին ապերը հանկարծ լռեց և դարձավ ինքնամփոփ, անտարբեր. շաբաթներով նա տնից չէր հեռանում—գյուղ չէր գնում: Սահակը հասկանում էր, որ դրա պատճառը ձմեռը չէր: Ամառները չէ, բայց ձմեռը նա համարյա ամեն օր գնում էր գյուղ՝ գնումների, ծանոթների մոտ. իսկ հիմա ոտքը բոլորովին կտրեց գյուղից. մենակ նստում էր տանը, իսկ արև օրերը շալն ուսերին գնում-գալիս էր պատշգամում և մտածո՛ւմ, մտածո՛ւմ… Ինչ էր մտածում այդքան— Սահակը չէր հասկանում. նա միայն զարմանում էր այդ փոփոխության վրա, ավելի էր խղճում «ապորը» և նրան, մխիթարելու թե զբաղեցնելու կամ նրա հետ խոսելու համար Սահակը պարզամտությամբ պատմում էր այն բաներից, ինչ լսել էր գյուղում, աղբյուրի մոտ, չմտածելով, որ իր պատմությունները կարող են հուզել ծերունուն: Եվ նրա բոլոր պատումները վերաբերում էին Նունուֆարին, թե ինչպես աղջիկները՝ Նոյեմն ու Անգինը կտրել են նրա առաջը եկեղեցու բակում, ինչ խոսքեր են ասել, ինչպես են կռվել: Սահակին թվում էր, թե այդ բոլորը կարող են հետաքրքրական լինել Մարտին ապոր համար, ուստի և պատմում էր մի տրտում հանգով:

— Ասում են՝ Նոյեմը մոտեցել-ասել է, թե՝ «դու ո՛վ ես, որ տեր դառնաս իմ հոր տանը, բաղին, իմ մոր շորերին»… Էդ բոլորը մթամ իմն է,— բացատրում էր Սահակն իր կողմից:— Ասում է ու խփում. որ խփում է՝ խեղճն ընկնում է… Մարտին ապերը լսում էր նրան ու տնքում կամ փնչացնում, տերողորմյայի հատիկները գցելով կամ չիբուխը խառնելով— ծծելով: Իսկ պահակ Սահակը նոր մանրամասնություններով շարունակում է իր պատմությունը Նունուֆարի մասին, միշտ իր համակրանքը հայտնելով հանգուցյալին, որ երբեք վատ խոսք չէր ասել իրեն ու միշտ խղճով էր վերաբերվել: Երբեմն, զրույցի նյութը փոխելով, Սահակը խոսում էր իրենց անելիքների մասին, այն մասին, թե շուտով գարունը բացվելու է կամ բացվում է արդեն, որտեղի՞ց պիտի սկսեն արդյոք աշխատանքները. պատե՞րը պետք է կարգի բերեն առաջ, թե՞ չորացած ճղները կտրեն:

Մարտին ապերը նրա այդ հարցերին չէր պատասխանում: Սահակին սակայն անհանգստացնում էր Մարտին ապոր անտարբերությունը դեպ այգու աշխատանքները:

Բայց մի առավոտ հանկարծ Սահակը զարթնեց թխկոցի ձայնից, հագնվեց արագ ու վազեց դեպի թխկոցը, որը շարունակվում էր այգու ներքին մասում: Թխկոցը— կացնի էր: Ո՞վ պիտի լիներ այսպես վաղ այգին մտած, ո՞վ էր թխկոցը գցել այդպես:

Իսկ երբ մոտեցավ՝ Սահակը զարմանքից քարացավ մի պահ, հետո սթափվելով՝ դարձյալ առաջ գնաց, բայց այժմ բոլորովին ապշած ու մոլոր:

— Էդ ի՞նչ ես անում, ապեր,— հարցրեց նա մի խուլ, զարմանքից դողացող ձայնով։ Ապերը չպատասխանեց, գուցե և չլսեց Սահակի հարցը։ Նա արխալուղի թևքերը քշտած, փեշերը գոտին խրած, ինչպես անում են փայտահատները, կացնով կտրում էր խնձորի մի ծառ, որ տերևից առաջ կոկոններ էր արձակել արդեն։ Իսկ դրա կողքին կտրել-գցել էր երկու-երեք խնձորենի էլ։ Ահա ինչու Սահակը զարմացած կանգ առավ, ապա տագնապած մոտեցավ նրան։

— Ապեր, էս ինչո՞ւ ես կտրել, սրանք ախր չոր չեն, — խոսում էր Սահակը հևալով, կարծես ահագին տարածություն էր վազել։— Ախր, ապեր, ափսոս են, ինչո՞ւ համար… Սահակը շշմած՝ նայում էր մերթ ընկած ծառերին, մերթ կտրվող ծառին ու կացնավոր Մարտին ապորը, և նրա սիրտը մղկտում էր այդ երիտասարդ դալար ծառերի համար, որ այնքան լավ, համեղ խնձորներ էին տալիս։ Սահակի տխրությունն ու տագնապն ավելանում էր մանավանդ այն պատճառով, որ Մարտին ապերը մռայլ լռություն էր պահպանում. չէր ասում, թե ինչո՛ւ համար, ինչն է ստիպել նրան՝ կտրել այդ ծառերը, որոնք հենց անցյալ տարի բռնել էին ամենից լավ և ինքը, Մարտին ապերը, դրանց ավելի էր սիրում, քան մյուս ծառերին։ Սահակը մի երկու անգամ էլ փորձեց իմանալ կտրելու պատճառը, բայց պատասխան չստանալով և մանավանդ տեսնելով, որ Մարտին ապերը, այդ ծառը կտրելուց հետո, կացինը ձեռին գնաց դեպի հարևան ծառը,— նա էլ չկարողացավ իրեն պահել, նետվեց դեպի Մարտին ապերը և բռնեց նրա թևը։

— Ապեր, ախր ափսո՛ս է…

Նրա ձայնի մեջ արցունքներ կային։

Ապերն այդ զգաց և նայեց Սահակին։

— Բա թողնեմ, որ շան ու գելի փայ դառնա,— գրեթե մռնչաց նա, թափով աշխատելուց հևասպառ։— Թող,— ու կացինը թափ տալով, թևը խլեց Սահակի ձեռից։

Եվ նորից սկսեց ծառերը կտրտել։

Ստեփան Զորյան, *Խնձորի Այգին* (1917)

(a) Ինչպե՞ս է այս հատվածում գրողը ներկայացնում սեփականատիրական կրքերի ավերիչ ազդեցությունը հերոսների, հատկապես Մարտին ապոր ավագ դստեր Նոյեմի հոգեբանության վրա։

(b) Վերլուծել, թե ինչպիսի խորհրդանիշներ է գործածում հեղինակը այս հատվածում և քննարկել դրանց առաջացրած էֆֆեկտները։

2.

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք,—
Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբույր,
— Ի՜նչ թարմություն,— ասացին,— ի՜նչ թարմություն,—
ու բացին
Լուսամուտներն իմ առջև, ու ես իմ սիրտը բացել՝
Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու հասմիկներ հոգեթով,
Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել,
Քաղաք իջել լեռներից՝ կանցներ զմրուխտ հեքիաթով
Երկրե-երկիր շաղ տալով կակաչներն իր ձեռքերի,
Մեր երգերի լուսաբացն ու գարունը լեռների։

Հովհաննես Շիրազ, *Գարնանամուտ* (1935)

(a) Ի՞նչպիսի գունային պատկերներով է բանաստեղծը նկարագրում երկրի, մարդու երիտասարդ հասակն ու ծաղկող տարիքը։

(b) Քննարկել, թե ինչ նշանակություն ունի բանաստեղծության վերնագիրը և ինչպես է այն զարգացնում հեղինակը բանաստեղծության մեջ։